



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

« ____ » _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37411) 521 877, ֆաքս՝ (37411) 529 753

№ _____

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Ս.Սահակյանին

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Ռ.Աբրահամյանին

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա.Ղահրամանյանին

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Ռ.Գրիգորյանին

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Կ.Գուլոյանին

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Ֆ.Ցոլակյանին

ՀՀ Սյունիքի մարզպետ
պարոն Ս.Խաչատրյանին

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
պարոն Հ.Սարգսյանին

ՀՀ Տավուշի մարզպետ
պարոն Հ.Աբովյանին

Հարգելի գործընկեր

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 10-ի «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 189-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի հանձնարարականի՝ կից ներկայացնում եմ «ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ով սահմանված՝ իրավական ակտի ընդունման հիմնավորումն ու տեղեկանքները:

Խնդրում եմ ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի N ՆՀ-174-Ն հրամանագրի 43-րդ կետով սահմանված ժամկետում նախագծի վերաբերյալ Ձեր առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Առդիր՝ 9 էջ:

Հարգանքով՝



Ա.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

<<.....>> <<.....>> 2015 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1844-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և <<Պետական գույքի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն իրականացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի N 898 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1844-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) որոշման վերնագրում <<ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ>> բառից հետո լրացնել << ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ>> բառերը.

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ դ) ենթակետով, ինչպես նաև N 5 հավելվածով՝ համաձայն N 1 հավելվածի.

<<դ) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:>>.

3) որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված կարգի 16-րդ կետի <<ա>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ա) յուրաքանչյուր տարի, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 30-ը, սույն որոշմամբ հաստատված հավելված N 5-ին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման հիման վրա կատարված առաջարկությունները.>>:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգերով տեսչական ստուգումներ իրականացնող մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ներկայացնել պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունների ցանկը, որոնք վերջին երեք տարիների ընթացքում անընդմեջ համարվել են բարձր ռիսկայնություն ունեցող կազմակերպություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը յուրաքանչյուր տարի, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 30-ը, հիմք ընդունելով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների արդյունքները, սույն կարգին համապատասխան կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման հիման վրա կատարված առաջարկությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

3. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների (մոնիտորինգի) արդյունքների հիման վրա՝ կազմակերպությունների գործարար ծրագրերը համապատասխան կազմակերպության և պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հետ քննարկման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում տվյալ կազմակերպության մասնավորեցման, բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն պայմանագրով կառավարման հանձնելու, վերակազմակերպման կամ կազմակերպության լուծարման նպատակահարմարության վերաբերյալ:

4. Կազմակերպությունը մասնավորեցման ծրագրում ներառելու, բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման, կազմակերպությունը կոնցեսիոն պայմանագրով կառավարման հանձնելու, կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման գործընթացը նախաձեռնելու համար հիմք է հանդիսանում հետևյալ չորս ցուցանիշներից առնվազն մեկի առկայությունը՝

1) հաշվետու տարում կազմակերպության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) բացասական մեծությունը,

2) հաշվետու տարում և նախորդող երկու տարիների ընթացքում կազմակերպության կուտակած վնասների տարեկան աճը,

3) հաշվետու տարում և նախորդող երկու տարիների ընթացքում անընդմեջ կազմակերպության իրացումից հասույթի աճի (կամ նվազման) դեպքում՝ զուտ վնասների աճը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգերով տեսչական ստուգումների իրականացման արդյունքում կազմակերպությունը, համաձայն տեսչական ստուգումներ իրականացնող մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության, հաշվետու տարում և նախորդող երկու տարիների ընթացքում անընդմեջ համարվել է բարձր ռիսկայնություն ունեցող կազմակերպություն:

5. Սահմանել, որ կազմակերպությունը չի կարող առաջարկվել մասնավորեցման, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված է, որ տվյալ կազմակերպությունը ենթակա չէ մասնավորեցման,

2) կազմակերպությունը գործունեություն է ծավալում տնտեսության այն ոլորտներում, որոնցում, համաձայն պետական գույքի մասնավորեցման ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, մասնավորեցում չի նախատեսվում:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

կազմակերպությունը կոնցեսիոն պայմանագրով կառավարման հանձնելու, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված ձևերից մեկով կազմակերպության վերակազմակերպման մասին առաջարկություն ներկայացնելու համար հիմք է հանդիսանում հետևյալ հանգամանքներից մեկի առկայությունը՝

1) կազմակերպության կողմից իրականացվող գործարար ծրագրով նախատեսված են ներդրումների կոնկրետ ուղղությունները, չափերը և ներդրումների ակնկալվող արդյունքները,

2) կազմակերպությունը գործունեություն է ծավալում տնտեսության բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտում և մասնավոր ընկերությունների գործունեությունը տվյալ ոլորտում տնտեսապես արդարացված չէ,

3) կազմակերպության գործունեությունը նախատեսվում է իրականացնել պետություն-մասնավոր հատված համագործակցության պայմանագրի հիման վրա,

4) կազմակերպությունը ներկայացրել է գործունեության բարելավման վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ տվյալ կազմակերպությունում մասնավոր կառավարման ներդրման համար:

7. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված ցուցանիշների առկայության դեպքում, եթե կազմակերպությունը չի ընկնում սույն կարգի 5-րդ կետում նշված սահմանափակման տակ և չի բավարարում սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պահանջներից որևէ մեկին, կարող է առաջարկություն ներկայացվել կազմակերպության լուծարման վերաբերյալ:

8. Կազմակերպության լուծարման մասին վերջնական որոշում կայացնելուց առաջ տվյալ կազմակերպությունում համապատասխան մարմնի (կամ անկախ աուդիտորի) կողմից իրականացվում է աուդիտ:

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1844-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներն ու վերլուծությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Իրավական ակտի ընդունումը բխում է <<Պետական գույքի կառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդված 33-ի՝ <<Պետական բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի մշտադիտարկումները և վերլուծությունները>> 5-րդ մասից, ըստ որի՝ պետական բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման կարգը պետք է սահմանի Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություններ իրականացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի N 898 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1844-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, իրականացնում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) ֆինանսատնտեսական վերլուծության դիտարկումներ և մոնիտորինգ: Վարչությունը կազմակերպությունների վերաբերյալ իրականացված ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների վերլուծության մասին

տեղեկանքները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում է ՀՀ կառավարության քննարկմանը: Սակայն գործնականում կանոնակարգված չէ մոնիտորինգի արդյունքների կիրառման հետ կապված հետադարձ կապը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 10-ի «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 189-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է կանոնակարգել կազմակերպությունների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվող լրացումներով կկանոնակարգվեն նշված խնդիրները՝ սահմանելով կոնկրետ իրավական նորմեր, որոնք թույլ են տալիս ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների հիման վրա, ինչպես նաև ընկերությունների գործարար ծրագրերը լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել որոշակի կազմակերպության մասնավորեցման, բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, վերեկազմակերպման կամ լուծարման մասին առաջարկություններ:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Վարչության կողմից առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումների (մոնիտորինգ) իրականացման արդյունքների և դրանից բխող վերլուծությունների հիման վրա

կազմակերպվելու է ընկերությունների գործունեության արդյունավետության գնահատումը և առաջարկություններ են ներկայացվելու դրանց հետագա ճակատագրի մասին:

Նախագծի ընդունման նպատակն է՝ սահմանել կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ընթացակարգն ու առանձնահատկությունները և նախանշել դրանից բխող հետագա քայլերը:

Առաջարկվող լրացումներով նախատեսվում է որոշումը համալրել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման կարգով, որը կիրառվելու է՝ այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց ֆինանսատնտեսական ցուցանիշների մշտադիտարկումն իրականացվում է Վարչության կողմից:

Առաջարկվում է որոշակի ցուցանիշների ի հայտ գալու դեպքում առաջարկություններ ներկայացնել տվյալ կազմակերպության վերաբերյալ, մասնավորապես՝ առաջարկություններ ներկայացնել կազմակերպությունը մասնավորեցնելու, կազմակերպության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն պայմանագրով հանձնելու, վերակազմակերպելու, ինչպես նաև դիրքորոշում ներկայացնել լուծարման առաջարկվող կազմակերպությունների մասին:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կիրականացվի կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման գործընթացի բարձրացում:

7. Այլ տեղեկություններ:

Չկան:

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ տեղի չեն ունենա:

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք	
1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	Նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին և չի առաջացնում նոր պարտավորություններ:
3	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	Չկան:

Տեղեկանք հասարակության մասնակցության մասին	
1	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ինտերնետային պաշտոնական կայքում՝ www.spm.am – ում:
2	Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
	Այդպիսի մասնակցության անհրաժեշտություն չի առաջացել:
3	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	Չկան: